Л. Х. ТЕР-МКРТЧЯН, Армянские источники о Средней Азии VIII—XVIII вв., М., издательство «Наука», 1985, 190 с.

Լ. Ք. ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ, Հայկական աղբյուրները Միջին Ասիայի մասին. VIII—XVIII դդ., *Մ., «Նաուկա» հրատարակչություն, 1985, 190 էջ։*

Հարևան ժողովուրդների պատմության ավելի խոր ու համապարփակ ուսումնասիրության ասպարեզում հայկական աղբյուրների օգտագործման կարևորությունը գիտակցվեց դեռ անցյալ դարի կեսերին։ Դրան հետևեցին Մ. Բրոսեի, Ք. Պատկանյանի և ուրիշների կողմից հայ պատմիչների աշխատությունների ամբողջական կամ քաղվածաբար այլ լեզուներով կատարած թարգմանությունների հրատարակումները։ Պատմագիտության զարգացմանը զուգընթաց հայկական աղբյուրների տարբեր լեզուներով հրատարակումներն ավելի ու ավելի լայն թափ ստացան և առ այսօր շարունակվում են։ Որպես այդ իրողության հետևանք, այսօր բազմազգ գիտական հասարակության սեփականությունն են հայկական աղբյուրներից սովետական ու օտարերկրյա գիտնականների կատարած ռուսերեն և այլ լեզուներով թարգմանությունները։

Այդ գործի նվիրյալների շարքում արժանի տեղ ունի Լ. Տեր-Մկրտչյանը, որն իր առջև խնդիր է դրել ի մի բերել Միջին Ասիայի մասին հայկական աղբյուրների հաղորդած տեղեկությունները ու դրանք ամփոփ ձևով ռուսերենով ներկայացնել մասնագետների լայն շրջաններին և ընդհանրապես ընթերցողին։ Լ. Տեր-Մկրտչյանի նպատակասլաց աշխատանքն ավելի է արժեքավորում այն հանգամանքը, որ Միջին Ասիայի ժողովուրդների պատմության տարբեր ժամանակահատվածներին ու առանձին պրոբլեմներին նվիրված աշխատություններում հայկական ակզբնաղբյուրները շատ քիչ են օգտագործվել։

Դեռ 1979 թ. Լ. Տեր-Մկրտչյանը ռուսերենով հրատարակեց «Հայկական աղբյուրները Միջին Ասիայի մասին. V—VII դդ.» գիրքը, որտեղ տեղ են գտել Միջին Ասիայի և հարակից շրջանների մասին հայկական աղբյուրների հաղորդած տեղեկությունները։ Դրա օրգանական շարունակությունն է կազմում ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Երեմյանի խմբագրությամբ լույս տեսած գրախոսվող աշխատությունը, որտեղ Լ. Տեր-Մկրտչյանը ի մի է բերել VIII—XVIII դդ. հայկական աղբյուրներում Միջին Ասիայի մասին եղած վկայությունները։

Գրախոսվող և նրան նախորդած գրքերը սովետական պատմական գիտության մեջ առաջին փորձն են՝ ամփոփելու հայկական միջնադարյան պատմիչների աշխատություններում և մանր ժամանակագրություններում ու ձեռագրական հիշատակարաններում եղած վկայությունները Միջին Ասիայի մասին։

Ցավալանց կարևոր է, որ մի շարք նյութեր, ինչպիսիք են, օրինակ XIII—XVIII դդ. մանր ժամանակագրություններից, XV դ. ձեռագրագրական հիշատակարաններից, Խաչատուր Ջուղայեցուց, Սամվել Անեցուց և ուրիշներից արված քաղագրությունները, ռուսերենով ներկայացվում են առաջին անգամ և դրանով իսկ գրախոսվող գրքի միջոցով են մտնում գիտական լայն շրջանառության մեջ։

Գրախոսվող աշխատությունը կառուցվածքային առումով նույնական է նախորդի հետ։ Սկզբում՝ առաջաբանից հետո, տրվում է հայ պատմիչների (Ղևոնդ, Թովմա Արծրունի, Հովհաննես Դրասխանակերտցի, Մովսես Կաղանկատվացի, Ասողիկ, Արիստակես Լաստիվերտցի, Մատթեոս Ուռհայեցի, Սամվել Անեցի, Կիրակոս Գանձակեցի, Վարդան Արևելցի, Սմբատ Սպարապետ, Հեթում Պատմիչ, Ստեփաննոս Օրբելյան, Թովմա Մեծոփեցի, Առաքել Դավրիժեցի, Աբրահամ Կրետացի, Խաչատուր Ջուղայեցի) ժառանգության պատմագրական տեսությունը։ Այս պատմիչներն իրենց աշխատությունների առանցքը բուն Հայաստանի պատմությունը դիտելով հանդերձ, նյութի սպառիչ շարադրման շահերից ելնելով՝ հարևան ժողովուրդների մասին հաճախ հաղորդում են կարևոր տեղեկություններ, որոնք ոչ միայն արժանահավատ են, այլև օտար աղբյուրներում չեն հանդիպում։ Այդ տեղեկությունները վերաբերում են, օրինակ, արաբական խալիֆայությանը, թուրք-սելջուկների ու Ջալալ էդ-Դինի արշավանքներին, մոնղոլական նվաճումներին, Լենկ Թեմուրի տիրապետությանը, թուրք-պարսկական պատերազմներին և այլն։

Աղբյուրների պատմագրական տեսության մեջ Լ. Տեր-Մկրտչյանը հայկական պատմիչների մասին համառոտ կենսագրական տեղեկություններ տալուց զատ գիտական պաշտաճ մակարդա-

կով ներկայացնում է նրանց աշխատությունները և ապրած ժամանակաշրջանը։ Նա նույն կերպ արժեքավորում է նաև XIII—XVIII դդ. հայկական մանր ժամանակագրությունները, որոնք ամփոփված են Վ. Հակոբյանի կազմած ու հրատարակած երկհատորյակում, ինչպես նաև XV դ. հայկական ձեռագրական հիշատակարանները, որոնք երեք հատորով հրատարակել է ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Լ. Խաչիկյանը։

Հայկական աղբյուրների պատմագրական տեսությունից հետո գրքում ռուսերենով տեղ են գտել այդ աղբյուրների այն հոդվածները, որոնք նվիրված են Միջին Ասիային ու նրա հարակից շրջաններին։ Դրանք իրավացիորեն ներկայացված են ժամանակագրական կարգով և թեմատիկ սկզբունքով։ Բոլոր տեքստերն օժտված են համապատասխան ծանոթագրություններով։ Գրքի վերջում տրված է հավելված, որտեղ հրատարակվող հատվածները բերված են բնագրով՝ գրաբարով։ Դա հետազոտողին հնարավորություն է տալիս գրաբարին տիրապետելու դեպքում անմիջապես օգտվելու այդ աղբյուրներից, առավել ևս, որ Լ. Տեր-Մկրտչյանը, իբրև կանոն, օգտագործել է հայ պատմիչների աշխատությունների գիտական, իսկ դրանց բացակայության դեպքում՝ առավել հաշող հրատարակությունները։

Միջին Ասիայի ժողովուրդների միջնադարի պատմության հետազոտողը, ինչ խոսք, ավելի կշահեր, եթե Լ. Տեր-Մկրտչյանն իր գրքում ռուսերենով գիտական լայն շրջանառության մեջ դներ հայկական միջնադարյան բոլոր աղբյուրները։ Իսկ դրան նա կհասներ, եթե գրախոսվող գրքում տեղ գտնեին նաև խնդրո առարկա ռեգիոնի մասին հայկական վիմագրերում և Գ. Հովսեփյանի ու այլոց հրատարակություններով հայտնի հայկական ձեռագրական հիշատակարաններում առկա հարուստ նյութերը։ Այդուհանդերձ, Լ. Տեր-Մկրտչյանը շնորհակալ աշխատանք է կատարել, որը, անշուշտ, պետք է գնահատել իբրև շահեկան ներդրում Միջին Ասիայի և նրան հարակից շրջանների ժողովուրդների պատմությունը հայկական աղբյուրների օգնությամբ՝ ավելի ապառիչ ուսումնասիրելու ասպարեզում։

ԱՐՏԱՇԵՍ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ